ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2026

ՀՈՒՆՎԱՐ - ՓԵՏՐՎԱՐ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 3

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

Ա ՄԱԿԱՐԴԱԿ

1 **Ե՞րբ է Տիգրան Մեծը հպատակեցրել Վիրքը։**

1) Ք. ա. 93 թ.
2) Ք. ա. 92 թ.
3) Ք. ա. 88 թ.
4) Ք. ա. 94 թ.

2 **Մամլուքները ե՞րբ են վերջնականապես գրավել Տարսոն և Ադանա քաղաքները։**

1) 1373 թ.
2) 1361 թ.
3) 1375 թ.
4) 1360 թ.

3 **Ե՞րբ են սկսվել ու մինչև ե՞րբ շարունակվել Սառնաղբյուրի ճակատում հայկական ուժերի հաղթական կռիվները թուրքական զորքի դեմ։**

1) 1918 թ. մայիսի 7–ից մինչև հունիսի 6–ը
2) 1918 թ. մայիսի 16–ից մինչև մայիսի 27–ը
3) 1918 թ. մայիսի 5–ից մինչև մայիսի 30–ը
4) 1918 թ. մայիսի 22–ից մինչև մայիսի 30–ը

4 **ՀՀ նախագահը ե՞րբ է հրամանագրով կասեցրել հայ–թուրքական արձանագրությունների վավերացման գործընթացը։**

1) 2010 թ. ապրիլի 22–ին
2) 2015 թ. հունվարի 29–ին
3) 2009 թ. հոկտեմբերի 10–ին
4) 2015 թ. սեպտեմբերի 6–ին

5 **Ե՞րբ են ռուսական զորքերը գրավել Ախալքալաքի բերդը։**

1) 1828 թ. օգոստոսի 15–ին
2) 1828 թ. հունիսի 23–ին
3) 1829 թ. օգոստոսի 28–ին
4) 1828 թ. հուլիսի 24–ին

6 **ԽՍՀՄ արտաքին գործերի ժողկոմ Վ. Մոլոտովը ե՞րբ է Թուրքիայի դեսպանին ներկայացրել Խորհրդային Միության տարածքային պահանջները։**

1) 1945 թ. մարտին
2) 1953 թ. փետրվարին
3) 1945 թ. հունիսին
4) 1953 թ. մայիսին

7 **Ո՞ր դարերով են թվագրվում Հայաստանում հայտնաբերված արամեական այբուբենով արձանագրությունները։**

1) Ք. ա. III – Ք. հ. I դարերով
2) Ք. ա. II – Ք. հ. II դարերով
3) Ք. ա. II – Ք. հ. IV դարերով
4) Ք. ա. III – Ք. հ. II դարերով

8 **Ո՞ր թվականին են Սասանյանների զորքերը տիրել Երուսաղեմին և տարել Քրիստոսի Խաչափայտը։**

1) 614 թ.
2) 610 թ.
3) 615 թ.
4) 617 թ.

9 **Ո՞րն էր Աշոտ Մսակերի նստավայրը մինչև նոր նստավայր տեղափոխվելը։**

1) Շիրակավան
2) Դարույնք
3) Բագավան
4) Բագարան

10 **Թվարկվածներից ո՞վ է իր 115 զինյալներով Սասունի անզեն բնակչությանը և վիրավորներին իջեցրել Մշո դաշտ և նրանց տեղավորել հայկական գյուղերում։**

1) Սեբաստացի Մուրադը
2) Սմբատը
3) Գևորգ Չաուշը
4) Անդրանիկը

11 **Թվարկված ստեղծագործություններից որի՞ հեղինակն է Սոնիա Պալասանյանը։**

1) «Բազմաչափ օբյեկտ»
2) «Անվերնագիր»
3) «Նատյուրմորտ դաշտային ծաղիկներով»
4) «Կոմիտասի վերջին գիշերը»

12 **Որտեղի՞ց է սկիզբ առնում Արածանին։**

1) Խաչափայտի լեռներից
2) Ծովք լճից
3) Հայկական Տավրոսից
4) Ծաղկանց լեռներից

13 **Ո՞վ է կառուցել Արցախի Ամարաս գյուղի եկեղեցին:**

1) Արիստակեսը
2) Գրիգոր Լուսավորիչը
3) Մեսրոպ Մաշտոցը
4) Գրիգորիսը

14 **Թվարկվածներից ո՞վ է Մկնռայի մանրանկարչության դպրոցի նշանավոր ներկայացուցիչը:**

1) Թորոս Ռոսլինը
2) Գրիգոր Մլիճեցին
3) Թորոս Տարոնացին
4) Սարգիս Պիծակը

15 **ՌԿ(բ)Կ կովկասյան բյուրոյի 1921 թ. սեպտեմբերի 3–ի «Կարսի կոնֆերանսի մասին» որոշման մեջ ի՞նչ էր նշվում:**

1) Խստորեն պահպանել Ալեքսանդրապոլի պայմանագրի շրջանակները, «ոչ մի դեպքում թույլ չտալ ԽՍՀՄ հանրապետությունների մեկուսի ելույթները»:
2) Խստորեն պահպանել Մոսկվայի պայմանագրի շրջանակները, «ոչ մի դեպքում թույլ չտալ Կովկասի հանրապետությունների մեկուսի ելույթները»:
3) Կոնֆերանսում բոլոր հարցերը քննարկել առանց նախապայմանների՝ խստորեն պահպանելով Ալեքսանդրապոլի պայմանագրի շրջանակները:
4) Խստորեն պահպանել Մոսկվայի պայմանագրի շրջանակները, «ոչ մի դեպքում թույլ չտալ ԽՍՀՄ հանրապետությունների մեկուսի ելույթները»:

16 **Ըստ Պատմահոր գրածի՝ ո՞ւմ էր վստահել Արտաշես Աշխարհակալը հայոց զորքի հարավային մասը:**

1) Սմբատին
2) Զարեհին
3) Տիրանին
4) Արտավազդին

17 **Ե՞րբ է ընդունվել հետևյալ որոշումը:**

«Պատրաստ լինել իշխանությունը գրավելու, երբ նեցուկ կունենանք մի հարևան երկիր, որով հնարավոր կլինի կապվել բանվորա-գյուղացիական Ռուսաստանի հետ»:

1) 1920 թ. ապրիլին
2) 1920 թ. նոյեմբերին
3) 1920 թ. հունվարին
4) 1920 թ. մայիսին

18 **Ո՞վ է մեջբերված խոսքերի հեղինակը:**

«Պատերազմը, երևի, ամառը կվերջանա, և պատերազմից հետո կմեկնեմ Ամերիկա … կմնամ մի քանի տարի, մինչև որ բոլոր ամերիկահայերին վերադարձնենք հայրենիք … Հույս կա, որ թե՛ Ռուսաստանը, թե՛ Անգլիան ու Ֆրանսիան ուժ կտան մեր պահանջներին, և մոտ ապագայում կստեղծվի ազատ Հայաստան …»:

1) Հովհաննես Քաջազնունին
2) Ալեքսանդր Խատիսյանը
3) Սիմոն Վրացյանը
4) Արմեն Գարոն

19 **Տերմինների կամ հասկացությունների բացատրություններից որո՞նք են ճիշտ:**

ա. Հայոց եկեղեցու ունեցվածքի բռնագրավման դեմ հայ ժողովրդի պայքարը կազմակերպելու համար Թիֆլիսում Արմեն Գարոյի գլխավորությամբ ստեղծված մարմինը կոչվում էր «Ինքնապաշտպանության կենտրոնական կոմիտե»:

բ. Բրեստ–Լիտովսկի բանակցություններում բոլշևիկների առաջ քաշած սկզբունքը հայտնի է «հաշտություն առանց բռնակցումների և ռազմատուգանքների» անունով:

գ. Սուլթան Աբդուլ Համիդի կողմից կազմակերպված Հայոց ցեղասպանությունը մարդկությանը հայտնի է «Մեծ եղեռն» անունով:

դ. Արևմտահայերի ազգային խորհրդի որոշումով կազմակերպվող զորամիավորը կոչվում էր նաև երկրապահ դիվիզիա:

ե. Հակահամիդյան շարժման մեջ ազդեցիկ դիրք ունեցող երիտթուրքերի կազմակերպությունը կոչվում էր «Միություն և արդարություն»:

1) բ, ե
2) ա, դ
3) բ, դ
4) գ, ե

20 **Տերմինների կամ հասկացությունների տրված բացատրություններից ո՞րն է ճիշտ:**

1) Հայ պատմիչների վկայած՝ հայկական նախամաշտոցյան այբուբենին գիտության մեջ պայմանականորեն տրվել է «դանիելյան նշանագրեր» անվանումը:
2) Վանի համահայկական պետության մեջ թագավորին կից գործող Ավագների խորհրդի անդամները կոչվում էին արքայի «գործակալներ»:
3) Հայաստանում III դարից սկսված ժամանակաշրջանը հայտնի է «բուն հելլենիստական» անունով:
4) Բաբելոնյան արձանագրություններում հիշատակվող Հայասա անվանումը նշանակում է Հայք, Հայաստան:

21 **Գտե՛ք արևմտահայության նկատմամբ Ռուսաստանի Ժամանակավոր կառավարության քաղաքականության արդյունքները ներկայացնող պատասխանի ճիշտ տարբերակը:**

ա. Արևմտյան Հայաստանում մտցվեց կառավարման նոր ձև:
բ. Ժամանակավոր կառավարությունը ճանաչեց Արևմտյան Հայաստանի անկախությունը:
գ. Մինչև հատուկ որոշում կայացնելը՝ Արևմտյան Հայաստանից թուրքական զորքի հետ փախած քրդերը վերադարձան հայկական մարզեր:
դ. Ռուսաստանի նոր իշխանությունը հայկական մարզերում հայանպաստ քաղաքականություն էր իրականացնում:
ե. Ռուսական զորքերը մնացին Հայաստանում մինչև հայկական պետության կայանալը:
զ. Ժամանակավոր կառավարությունը հրահանգեց թույլատրել արևմտահայերին վերաբնակվելու հայկական մարզերում:

1) ա, դ, զ
2) բ, գ, ե
3) ա, գ, զ
4) բ, դ, ե

22 **Տրվածներից ո՞րն է Անիի Բագրատունյաց թագավորության անկման պատճառները ներկայացնող պատասխանի ճիշտ տարբերակը:**

ա. երկրի ավատատիրական մասնատվածության վերացումը
բ. Հայաստանի կենտրոնախույս ուժերի անկախական ձգտումները
գ. Հայաստանի նկատմամբ Բյուզանդիայի վարած նվաճողական քաղաքականությունը
դ. Խալիֆայության կողմից Հայաստանի կենտրոնաձիգ ուժերին օժանդակելը
ե. թագավորության ներսում սկսված գահակալական պայքարը
զ. երկրի տնտեսության ընդհանուր անկումը

1) ա, գ, ե
2) բ, գ, ե
3) ա, բ, զ
4) բ, գ, դ

23 **Տրված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել չորրորդը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության։**

ա. Արցախահայության առաջին համագումարի սկիզբը Շուշիում
բ. գեներալ Թոմսոնի դառնալը Բաքվի նահանգապետ
գ. Հայաստանի առաջին հանրապետության խորհրդարանի կողմից «Դպրոցի կառավարման մասին» օրենքի ընդունումը
դ. Հովհաննես Քաջազնունու նորաստեղծ կառավարության ժամանելը Երևան
ե. Հայաստանի խորհրդի առաջին նիստի բացումը
զ. Հայոց ազգային խորհուրդը չճանաչելու մասին Խալիլ բեյի հայտարարությունը

1) բ
2) գ
3) ա
4) ե

24 **Ըստ ժամանակագրական հաջորդականության՝ տրված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել հինգերորդը։**

ա. Շամքոր քաղաքի գրավումը մոնղոլների կողմից
բ. Կոտմանի դաշտում տեղի ունեցած ճակատամարտը
գ. Դվինի գրավումը մոնղոլների կողմից
դ. մոնղոլ պատվիրակների սպանությունը անեցիների կողմից
ե. Զաբելի և Հեթումի ամուսնությունը
զ. Ջալալեդդինին պարտության մատնելուց հետո մոնղոլների վերադարձը Միջին Ասիա

1) զ
2) դ
3) ա
4) գ

25 **Հայ գիտնականների անունները համապատասխանեցրե՛ք իրենց գործունեության բնագավառներին և գտե՛ք պատասխանի ճիշտ տարբերակը։**

1. քիմիա	ա. Արտաշես Շահինյան
2. ֆիզիոլոգիա	բ. Հովհաննես Կարապետյան
3. մաթեմատիկա	գ. Լևոն Օրբելի
4. երկրաբանություն	դ. Աբգար Հովհաննիսյան
5. պատմագիտություն	ե. Հովսեփ Օրբելի
	զ. Լևոն Ռոտինյան

1) 1–զ, 2–գ, 3–ա, 4–բ, 5–դ
2) 1–բ, 2–գ, 3–ա, 4–զ, 5–դ
3) 1–զ, 2–ե, 3–դ, 4–բ, 5–ա
4) 1–բ, 2–ե, 3–դ, 4–զ, 5–ա

26 **Կատարե՛ք համապատասխանեցում և գտե՛ք պատասխանի ճիշտ տարբերակը:**

Գործիչ	**Պաշտոն**
1. Երվազ	ա. Հայաստանի գահակալ
2. Տիրիբազ	բ. Հյուսիսային Միջագետքի փոխարքա
3. Գուրաս	գ. Մեծ Հայքի գերագույն քուրմ
4. Վահագն	դ. Մարաստանի արքա
5. Աժդահակ	ե. Հայաստանի արևմտյան մասի կառավարիչ
	զ. Հայոց դիցարանի կրակի և արդարության աստվածը

1) 1–գ, 2–ե, 3–դ, 4–ա, 5–զ
2) 1–գ, 2–ե, 3–բ, 4–ա, 5–դ
3) 1–գ, 2–ե, 3–բ, 4–զ, 5–ա
4) 1–ե, 2–գ, 3–բ, 4–զ, 5–դ

27 **Տրվածներից որո՞նք 1896 թ. հունվարի 30–ին Հալեպում կնքված հաշտության պայմաններից չեն:**

ա. Զեյթունում պետք է նշանակվեր բնակչության համար ցանկալի տեղացի կառավարիչ
բ. օսմանյան կառավարությունը պարտավորվում էր ապահովել հայերի կյանքն ու գույքը
գ. զեյթունցիները կարող էին պահել պաշտպանական նվազագույն քանակի զենք
դ. հնչակյան գործիչները սեփական ծախսով պետք է հեռանային կայսրության տարածքից
ե. օսմանյան կառավարությունը պարտավորվում էր զորքերը հետ քաշել Զեյթունից
զ. տեղական պաշտոնյաները լինելու էին հայեր

1) ա, գ, դ
2) բ, գ, ե
3) ա, դ, զ
4) բ, ե, զ

28 **Ե՞րբ են թուրքական զորքերը Շուշին գրավելու անհաջող փորձ արել:**

1) 1724 թ.
2) 1725 թ.
3) 1726 թ.
4) 1727 թ.

29 **Ինքնիշխան Հանրապետությունների Միություն ստեղծելու մասին պայմանագրի հանդիսավոր ստորագրումը ԽՍՀՄ ղեկավարության կողմից ո՞ր օրը նշանակվեց:**

1) 1991 թ. մայիսի 25-ին
2) 1991 թ. մարտի 17-ին
3) 1991 թ. հուլիսի 25-ին
4) 1991 թ. օգոստոսի 20-ին

30 **Որքա՞ն զինվորական կար Կովկասյան ճակատի ռուսական կռվող զորքի մարտակազմում 1917 թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ:**

1) 185 000
2) 158 000
3) 232 000
4) 258 000

31 **XII դարում որքա՞ն բերդ և ամրոց կար Սյունիքի թագավորությունում:**

1) 72
2) 40
3) 52
4) 43

32 **Որտե՞ղ է ասվել հետևյալ խոսքը:**

«Ամեն ոք իր մասին է մտածում: Իր երկրի սահմաններից այն կողմ եթե նայող կա, նայում է միայն հանուն իր շահերի: Ոչ ոք ոչ մի մարդ չի ուղարկի տաճկական ճակատ՝ տուն գնացող ռուսներին փոխարինելու համար… մենակ ենք և պետք է ապավինենք միա՛յն մեր ուժերին՝ թե՛ ճակատը պաշտպանելու և թե՛ երկրի ներսում կարգ հաստատելու համար»:

1) Երևանի Հայոց ազգային խորհրդի նիստում
2) Արևմտահայերի ազգային խորհրդի նիստում
3) Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի նիստում
4) Արևելահայերի ազգային համախորհրդակցությունում

33 **Ո՞ւմ անունն է բաց թողնված մեջբերված հատվածում:**

«Աստվածներից առաջիններն ահեղ էին ու երևելի և աշխարհի մեծամեծ բարիքների պատճառ, աշխարհի ու բազմամարդության սկիզբ: Սրանցից առաջ եկավ հսկաների սերունդը. . . Սրանցից մեկն էր . . . ——————— »:

1) Հաբեթի
2) Արամի
3) Թորգոմի
4) Հայկի

34 **Ո՞վ է մեջբերված խոսքի հեղինակը։**

«. . . Քանզի, եթե մեռնեն, մեր թշնամիները կմեռնեն, և եթե սպանեն, մեր թշնամիները կսպանվեն, և մենք կապրենք խաղաղությամբ: Քանզի, եթե նրանք իրենց երկրում մնան, մեզ հանգիստ չի լինի»:

1) Հովհանոսը
2) Մավրիկիոսը
3) Խոսրով I Անուշիրվանը
4) Հուլիանոսը

35 **Տերմինների կամ հասկացությունների բացատրություններից որո՞նք են ճիշտ։**

1. Արցախյան հիմնախնդրի լուծման նպատակով ԵԱՀԿ ձևաչափով ու Ռուսաստանի, Գերմանիայի և ԱՄՆ-ի համանախագահությամբ ստեղծված կառույցը կոչվում էր ԵԱՀԿ Մինսկի խումբ:
2. Հայաստանի առաջին հանրապետությունում 1919-1920 թթ. քաղաքներում և գավառներում ներդրված համայնքային ինքնավարությունները կոչվում էին զեմստվոներ, որոնք նշանակովի մարմիններ էին:
3. Հայաստանի խորհրդայնացումից հետո հանրապետությունում ստեղծված գործադիր իշխանության նոր մարմինները կոչվում էին ժողովրդական կոմիսարիատներ:
4. ԼՂԻՄ Մարտակերտի շրջանի Գետաշեն և Մարտունաշեն գյուղերում 1992 թ. գարնանը խորհրդային բանակի հետ համագործակցությամբ ադրբեջանական իշխանությունների իրականացրած գործողությունը կոչվում էր «Կոլցո»՝ «Օղակ»:
5. Քեմալական ազգայնամոլական շարժման նպատակները ձևակերպած պաշտոնական փաստաթուղթը կոչվում էր «Թուրքական ազգային ուխտ»:

36 **Թվարկվածներից որո՞նք չէին մտնում Եռյակ ենթահամակարգի մեջ։**

1. թվաբանություն
2. տրամաբանություն
3. քերականություն
4. երկրաչափություն
5. ճարտասանություն

37 **Տրվածներից որո՞նք են Խորհրդային Հայաստանի գյուղատնտեսության կոլեկտիվացման գործընթացի իրական պատճառահետևանքային կապեր:**

1. Գյուղացիների տեղաշարժերը կասեցնելու նպատակով նրանցից խլեցին տրանսպորտային միջոցները:
2. Պետությունը ստիպված էր հրաժարվել համատարած կոլեկտիվացման կարգախոսից և գյուղացիական տնտեսությունների նկատմամբ սկսեց կիրառել հարկերի ավելացման քաղաքականություն:
3. Համատարած կոլեկտիվացումից դժգոհ Դարալագյազի շրջանի գյուղացիները 1929 թ. գարնանը ապստամբեցին, իսկ նրանց պայքարը ղեկավարեցին նախկին խմբապետներ Մարտիրոսը և Ղարդաշխանը:
4. Կոլտնտեսությունները նյութական շահագրգռվածության լայնորեն կիրառման արդյունքում ապահովեցին տնտեսական վերելք:
5. Հարկային ծանր բեռին չդիմանալու արդյունքում Հայաստանի գյուղացիության ճնշող մեծամասնությունը ստիպված անդամագրվեց կոլտնտեսություններին 1935-1937 թթ. :
6. Կոլեկտիվացման արդյունքում Խորհրդային Հայաստանում 1930–ական թթ. վերջին կար ավելի քան 1500 կոլտնտեսություն:

38 **Տրված պատմական իրադարձությունների հետևանքներից որո՞նք են ճիշտ:**

1. Արգիշտի I–ի կողմից Բաբելոնիայի նվաճման հետևանքով հայոց աշխարհակալության արևմտյան սահման դարձավ Միջերկրական ծովի արևելյան ավազանը:
2. Մենուայի հաղթարշավների հետևանքով Հայկական լեռնաշխարհի հյուսիսային շրջանները մտան Վանի տերության կազմի մեջ, սակայն հարկատու չդարձան:
3. Սարդուրի II–ի կողմից Բաբելոնիայի վերանվաճման հետևանքով հայոց աշխարհակալության հարավային սահմանը կրկին հասավ Պարսից ծոց:
4. Ռուսա I-ի հաղթարշավների հետևանքով Ասորեստանը թուլացավ և, չկարողանալով այլևս վերականգնել իր դիրքերն Առաջավոր Ասիայում, նվաճվեց Բաբելոնի կողմից:
5. Միայն Արգիշտի I–ի և Սարդուրի II–ի նվաճումների հետևանքով Վանի թագավորություն բերվեց մեկ միլիոնից ավելի ռազմագերի-ստրուկ:
6. Սարդուրի II–ի կողմից կախյալ թագավորությունները վերացնելու և պետության վարչական միավորներ դարձնելու հետևանքով Վանի թագավորությունն սկսեց անցում կատարել համադաշնային կառավարման համակարգից կենտրոնացված պետության:

39 **Տրված պնդումներից որո՞նք են ճիշտ։**

1. Աղբյուր Սերոբի համոզմամբ՝ օսմանյան բռնատիրությունից ազատագրումը հնարավոր էր միայն կայսրության բոլոր ժողովուրդների համատեղ պայքարի շնորհիվ։
2. 1881 թ. նոյեմբերի վերջերին թուրքական ոստիկանությունը հայտնաբերել է Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը և բանտարկել շուրջ 70 մարդու։
3. Գրիգոր Արծրունու գլխավորությամբ մի խումբ հայ երիտասարդներ 1882 թվականին Թիֆլիսում հիմնել են գաղտնի խմբակ, որը գոյատևել է մինչև 1886 թվականը։
4. Մկրտիչ Խրիմյանի խորհրդով Մկրտիչ Փորթուգալյանը և նրա 12 սաները ստեղծել են մի միություն, որը կազմել է ապագա Հնչակյան կուսակցության կորիզը։
5. Հմուտ հայագետներ Հ. Հյուբշմանը և Մ. Բրոսեն ճշտել են հայերենի տեղը հնդեվրոպական լեզվաընտանիքում՝ որպես նրա առանձին ճյուղ։
6. 1860 թ. մայիսի 24–ին Կ. Պոլսի Ազգային ընդհանուր ժողովը հաստատել է արևմտահայերի կանոնադրությունը կամ Ազգային սահմանադրությունը։

40 **Ընտրե՛ք սխալ պնդումները։**

1. Բյուզանդիայի մայրաքաղաքը օսմանյան թուրքերի կողմից գրավվելուց տասը տարի անց Կ. Պոլսում հիմնադրվեց հայոց պատրիարքություն։
2. 1603 թ. շահ Աբաս I-ը ձեռնամուխ եղավ Օսմանյան տերությանը 1590 թ. զիջած տարածքների վերագրավմանը։
3. Ակ–կոյունլուներին պարտության մատնելուց և նրանց մայրաքաղաք Թավրիզը գրավելուց հետո Սեֆյանները 1502 թ. հիմնադրեցին իրենց պետությունը։
4. XVII դ. առաջին կեսին միայն զեյթունցիները պարտավորվեցին օսմանյան իշխանություններին վճարել տարեկան որոշակի հարկ և պահպանեցին իրենց ներքին ինքնուրույնությունը։
5. Շահ Աբաս I-ը, հայ վաճառականությանը փոխադրելով Իրանի հյուսիսային նահանգներ, որոշել էր մետաքսի առևտուրը տեղափոխել Պարսից ծոցի շրջան։
6. Միքայել Սեբաստացի կաթողիկոսը 1562 թ. գումարված եկեղեցական գաղտնի ժողովի անունից Աբգար Թոխաթեցու ղեկավարությամբ պատվիրակություն ուղարկեց Հռոմ։

41 **Ո՞ր իրադարձությունն է խախտում տրված շարքի ժամանակագրական ճիշտ հաջորդականությունը։**

1. Խոսրով I-ի արշավելը Կովկասի լեռնական ցեղերի դեմ՝ հոր մահվան վրեժն առնելու համար
2. Կարակալլայի ուղարկած զորքի ջախջախումը և վտարումը Հայաստանից
3. Իսոսի մոտ տեղի ունեցած ճակատամարտում Նիգերի սպանվելը
4. Մակրինոս կայսեր կողմից հայ-հռոմեական դաշինքի վերականգնումը
5. Տրդատ II–ի հաղթական արշավանքները և հասնելը մինչև Տիզբոն
6. Արտավազդ V-ի գահակալելը Մեծ Հայքում

42 **Իրադարձությունները դասավորե՛ք ժամանակագրական հաջորդականությամբ։**

1. Մովսես Սարաֆյանի կողմից Հայաստանի ազատագրության ծրագրի ներկայացնելը Ռուսաստանի արտաքին գործերի կոլեգիային
2. Հովսեփ Էմինի վերադառնալը Հյուսիսային Կովկասից Հայաստան
3. Շահամիր Շահամիրյանի գլխավորությամբ ազատագրական խմբակի ստեղծումը Մադրասում
4. Մոսկվայում Մովսես Բաղրամյանի միանալը Հովսեփ Էմինին
5. Էմինի և Հերակլ II-ի կողմից խրախուսական նամակներ ուղարկելը Հովնանին

43 **Գործիչների անունները համապատասխանեցրե՛ք նրանց հետ կապված իրադարձություններին։**

Ա. Նա դարձել է Զեյթունի 1895-1896 թթ. ապստամբության փաստական ղեկավարը։
Բ. Նրա գլխավորությամբ 1895 թ. աշնանը Մալաթիայի հայերը ջարդեցին ու քաղաքից դուրս քշեցին թուրք ոստիկաններին ու թուրքական խուժանին։
Գ. Նա մտահղացել է Խանասորի արշավանքի գաղափարը և եղել է այդ վրեժխնդրական գործողությունը գլխավորողներից մեկը։
Դ. Նա գլխավորել է Վանի 1896 թ. հերոսական ինքնապաշտպանությունը։
Ե. Նրա գլխավորությամբ 78–հոգանոց հայդուկ–կամավորների ջոկատն անցավ ռուս–թուրքական սահմանը և մարտի բռնվեց թուրքերի և քրդերի հետ։

1. Նիկոլ Դուման
2. Մկրտիչ Ավետիսյան
3. Եղիշե քահանա Խաչատրյան
4. Նազարեթ Չաուշ
5. Սարգիս Կուկունյան
6. Արմենակ Եկարյան

Ա	Բ	Գ	Դ	Ե

44 **Արշակունիների թագավորության շրջանի գործիչների անունները համապատասխանեցրե՛ք նրանց ասած խոսքերին։**

Ա. «Հեռո՛ւ ինձանից, չարագո՛րծ ծառա, որ տերերիդ վրա տեր ես դարձել, և ես չեմ ների քեզ և քո որդոց իմ նախնիների վրեժը…»։
Բ. «Քավ լիցի՝ իմ մոլորված ոչխարը մատնեմ գայլերին»։
Գ. «Այժմ, երբ ինձ տեսնում ես կարճահասակ, մեծությանս չափը չես հասկանում, որովհետև մինչ այժմ ես քեզ համար առյուծ էի, իսկ այժմ՝ աղվես…»։
Դ. «Իմ այնքան ծառայությունների, արյուն ու քրտինք թափելու… հատուցումն ա՞յս եղավ։ Բայց այս մահը երանի՛ թե ձիու վրա ինձ հասներ»։
Ե. «Քեզ պսակում եմ …, որովհետև դու ձգտում էիր հայոց վրա թագավորելու, և իմ՝ ասպետիս պարտքն է քեզ պսակել իմ հայրերի իշխանության կարգով»։

1. Սահակ Պարթև
2. Մանվել Մամիկոնյան
3. Սմբատ Բագրատունի
4. Մուշեղ Մամիկոնյան
5. Վասակ Մամիկոնյան
6. Արշակ II

Ա	Բ	Գ	Դ	Ե

45 **Տրված վեց պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրե՛ք «Ճիշտ է», «Սխալ է», «Չգիտեմ» պատասխաններից որևէ մեկը։**

1. Խաչակիրներն առաջին անգամ հայտնվել են Կիլիկիայում Լևոն I իշխանի հոր՝ Կոստանդին I-ի օրոք։
2. Հայոց իշխանական համակարգում գործել է «Իմ վասալի վասալը իմ վասալն է» ենթակայության ավատատիրական սկզբունքը։
3. Կիլիկյան Հայաստանում սպարապետությունը Ռուբինյանների, ապա Հեթումյանների ժառանգական պաշտոնն էր։
4. Վաղմիջնադարյան Հայաստանում ավատատիրական աստիճանակարգի գլուխ կանգնած էր թագավորը, դրա հաջորդ աստիճանին աշխարհական նախարարներն էին՝ բդեշխները և գործակալները։
5. X դարի վերջերին հայերը կազմում էին Կիլիկիայի բնակչության մեծամասնությունը։
6. Հայաստանում Բագրատունիների օրոք չկար Արշակունյաց ժամանակաշրջանին այնքան հատուկ հակասությունը թագավորական իշխանության և եկեղեցու միջև, իսկ հայոց կաթողիկոսը ճանաչում էր թագավորի գերիշխանությունը։

Բ ՄԱԿԱՐԴԱԿ

46 **Գտե՛ք տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները։**

ա. Հայաստանի պարսկա–բյուզանդական բաժանումից հետո Վասպուրական նահանգի մեծ մասից կազմված վարչական միավորը հայտնի էր «Ներքսագույն Հայք» անունով։
բ. Հերթ ոստիկանի «աշխարհագրով» մտցված՝ ըստ գերդաստանների՝ երդերի, ոչ մահմեդականներից գանձվող հարկը կոչվում էր գլխահարկ։
գ. Նախարարական տների ավագ իշխանները կոչվում էին սեպուհներ։
դ. Հայաստանի պարսկա–բյուզանդական բաժանումից հետո Բարձր Հայք նահանգը հայտնի էր «Մասն Մեծ Հայոց» անունով։
ե. Ամբողջ միջնադարի ընթացքում միայն Վասպուրականի հայ բնակչության հոգևոր կյանքը կարգավորող նվիրապետական աթոռը կոչվում էր Աղթամարի կաթողիկոսություն։
զ. Հայաստանի պարսկա–բյուզանդական բաժանումից հետո Տայք նահանգը հայտնի էր «Մեծ մասն Մեծ Հայոց» անունով։
է. Հայաստանի պարսկա–բյուզանդական բաժանումից հետո Տուրուբերան նահանգը հայտնի էր «Մեծ Հայք» անունով։

1) դ, զ, է
2) բ, դ, է
3) ա, գ, ե
4) բ, դ, զ

47 **Ընտրե՛ք տերմինների կամ հասկացությունների սխալ բացատրությունները։**

ա. Հայկազուն–Երվանդունիների գահակալության սկզբնական շրջանում երկրի արքան հայտնի էր «Հայոց թագավոր» տիտղոսով։
բ. Զրադաշտական կրոնի սպասավորները կոչվում էին քուրմ։
գ. Վարչական առումով Վանի թագավորությունը բաժանված էր միավորների, որոնք կոչվում էին մարզեր։
դ. Աստվածային գերագույն եռյակի պաշտամունքը բնիկ հնդեվրոպական երևույթ է և հայոց մեջ ունի վաղնջական ակունքներ։
ե. Փարպեցին Արտաշես Ի–ի ստեղծած վարչական միավորներն անվանում է ստրատեգիաներ, իսկ դրանց կառավարիչներին՝ ստրատեգոսներ։
զ. Վանի թագավորությունը հինարևելյան տիպի բացարձակ միապետություն էր։
է. Հելլենիզմի դարաշրջանում հայոց մեջ տարածված կրոնը միաստվածային էր։

1) բ, ե, է
2) ա, ե, զ
3) բ, դ, է
4) ա, գ, զ

48 **Որո՞նք են իրադարձությունների իրական պատճառահետևանքային կապեր:**

ա. Բոլշևիկների Մայիսյան ապստամբության հետևանքով Զանգեզուրի երկրամասը մնաց ՀՍԽՀ կազմում:
բ. Հայկական տարածքները զավթելու Խորհրդային Ադրբեջանի ծրագրին Խորհրդային Ռուսաստանի աջակցության հետևանքով Նախիջևանը անջատվեց Հայաստանից:
գ. 1928–1940 թթ. բանվոր դասակարգի և ինժեներական անձնակազմի քանակական աճը բացատրվում էր նեպի կիրառմամբ:
դ. Խորհրդային Հայաստանի արդյունաբերացման հետևանքով Ղափանը դարձավ տեքստիլ արդյունաբերության կենտրոն:
ե. Հայաստանում բռնությամբ ներդրված բոլշևիկյան վարչակարգի քաղաքականության պատճառով տեղի ունեցան ժողովրդական զանգվածների ելույթներ:
զ. Հայ–վրացական սահմանազատման համաձայնագրով Լոռին, բացառությամբ Հյուսիսային Լոռու հայկական մի խումբ գյուղերի, մնաց Խորհրդային Հայաստանին:
է. Փետրվարյան ապստամբության պարտությունից հետո Հայաստանում շարունակվեց ռազմական կոմունիզմի քաղաքականության կիրառումը:

1) ա, դ, է
2) բ, ե, է
3) ա, գ, զ
4) բ, ե, զ

49 **Թվարկվածներից որո՞նք 1830 թ. զանգվածային վերաբնակեցման իրական հետևանքներ չեն:**

ա. 75 000 արևմտահայերի վերաբնակվելը ռուսական տերությանն անցած տարածքներում
բ. կարսեցիների հաստատվելը Գյումրիում, Շիրակի դաշտում և Թալինի շրջակայքում
գ. Մուշ և Վան քաղաքների զրկվելը մեծ թվով հայ առևտրականներից ու արհեստավորներից, որոնք կարևոր դեր ունեին Օսմանյան կայսրության տնտեսության մեջ
դ. վանեցիների հաստատվելը Տավուշում և Սյունիքում
ե. բայազետցիների և ալաշկերտցիների հաստատվելը Սևանա լճի ավազանում
զ. Ախալքալաքում և Ախալցխայում հայ բնակչության տեսակարար կշռի շեշտակի աճը, նախորդ ժամանակներին բնորոշ ժողովրդագրական իրավիճակի վերականգնումը
է. 45 000 պարսկահայերի տեղափոխվելը Արևելյան Հայաստան

1) բ, դ, է
2) ա, գ, զ
3) բ, գ, ե
4) գ, դ, է

50 **Ըստ ժամանակագրական հաջորդականության՝ թվարկված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել յոթերորդը։**

ա. Հայկական իշխանության ստեղծումը Սյունիքում
բ. Իսրայել Օրու ժամանումը Շամախի քաղաք
գ. Առաքել Դավրիժեցու «Գիրք պատմությանց»-ի տպագրումը իր կենդանության ժամանակ
դ. Օսմանյան պետության և Վենետիկի հանրապետության միջև երկարատև պատերազմի սկսվելը
ե. Իսրայել Օրու կողմից ծրագրի ներկայացումը Պետրոս I–ին
զ. Հակոբ Ջուղայեցու պատվիրակության հասնելը Կ. Պոլիս
է. Դավիթ բեկի առաջին հաղթական մարտը ջևանշիր կոչվող քոչվոր ցեղի դեմ
ը. Հյուսիսային պատերազմի սկիզբը
թ. Անգեղակոթի գաղտնի խորհրդակցությունը Իսրայել Օրու մասնակցությամբ
ժ. հայկական պատվիրակության կազմում մահտեսի Շահմուրատի կրկին ժամանելը Փարիզ՝ բանակցությունները շարունակելու համար

1) թ
2) ե
3) բ
4) ը

51 **Ըստ ժամանակագրական հաջորդականության՝ թվարկված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել վեցերորդը։**

ա. Նվեր Սաֆարյանի նշանակվելը Թամանյան դիվիզիայի հրամանատար
բ. Նելսոն Ստեփանյանի զոհվելը
գ. Կարապետ Սիմոնյանին ԽՍՀՄ հերոսի կոչմանն արժանացնելը
դ. Երկրորդ աշխարհամարտի սկիզբը
ե. Գրիգոր Հարությունյանի ընտրվելը ՀԿ(բ)Կ կենտկոմի առաջին քարտուղար
զ. Հայրենական մեծ պատերազմի սկիզբը
է. Էջմիածնի վանքը փակելու վերաբերյալ ՀԿ(բ)Կ կենտկոմի որոշման ընդունումը
ը. խորհրդա–գերմանական չհարձակման պայմանագրի կնքումը
թ. 390–րդ դիվիզիայի կազմացրումը
ժ. Լազր Չափչախյանին ԽՍՀՄ հերոսի կոչում շնորհելը

1) զ
2) գ
3) թ
4) ժ

52 **Ո՞ր իրադարձությունն է տեղի ունեցել հինգերորդը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության։**

ա. Թորոս I–ի կողմից Սիս և Անավարզա քաղաքների գրավումը
բ. Լևոն I իշխանի կողմից Տարսոն, Մսիս և Ադանա քաղաքների գրավումը
գ. խաչակիրների կողմից Երուսաղեմի թագավորության հիմնադրումը
դ. Լևոն I իշխանի գերեվարությունը
ե. Բերդուսի ճակատամարտը
զ. Թորոս I–ի կողմից Մանդալե եբայրներին մահապատժի ենթարկելը
է. Դավիթ Շինարար թագավորի զորքի մուտքը Անի
ը. Հովհաննես Կոմնենոս կայսեր գլխավորած բյուզանդական բանակի ներխուժումը Դաշտային Կիլիկիա
թ. Լևոն I–ի որդի Թորոսի փախուստը բյուզանդական գերությունից
ժ. Տաշիր-Զորագետի թագավորության վերացումը

1) է
2) զ
3) բ
4) ժ

53 **Կատարե՛ք համապատասխանեցում և ընտրե՛ք պատասխանի ճիշտ տարբերակը։**

1. Դենշապուհի կողմից աշխարհագրի անցկացումը	ա. 449 թ.
2. Արտաշատի ժողովի գումարումը Հովսեփ կաթողիկոսի գլխավորությամբ	բ. 454 թ.
	գ. 482 թ.
3. հայ նախարարների ժամանումը Տիզբոն	դ. 484 թ.
4. Հովսեփ Վայոցձորցու մահը	ե. 481 թ.
5. Ճարմանայի ճակատամարտը	զ. 447 թ.
6. Հազարավուխտի գլխավորությամբ պարսից զորքերի ներխուժումը Հայաստան	է. 450 թ.

1) 1–զ, 2–ա, 3–գ, 4–ե, 5–բ, 6–դ
2) 1–ա, 2–է, 3–զ, 4–գ, 5–ե, 6–բ
3) 1–զ, 2–ա, 3–է, 4–բ, 5–գ, 6–դ
4) 1–ա, 2–է, 3–զ, 4–բ, 5–ե, 6–գ

54 **Պնդումներից որո՞նք են ճիշտ:**

ա. Խորհրդային իշխանությունը Փարիզի և Սան Ռեմոյի պայմանագրերով հրաժարվեց Հայկական հարցից, և այդ հիմնախնդրի ամբողջ ծանրությունն իր վրա վերցրեց Սփյուռքը:

բ. 1920–ական թթ. սկզբին Հայկական հարցի համար դիվանագիտական պայքարը շարունակում էին Ազգային պատվիրակությունը՝ Պողոս Նուբար փաշայի, ապա՝ Լ. Շանթի գլխավորությամբ, և նախկին Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը՝ Ա. Ահարոնյանի նախագահությամբ:

գ. Սփյուռքի հետ հարաբերությունները մասնակիորեն վերականգնվեցին միայն Հայրենական մեծ պատերազմի տարիներին՝ հակաֆաշիստական ընդհանուր ճակատի ստեղծման ընթացքում:

դ. Սփյուռքում հայապահպանության և Հայ դատի լուծման գործում զգալի դեր էին խաղում հայ ազգային քաղաքական կուսակցությունները՝ ՀՅԴ–ն, Հնչակյան կուսակցությունը և Ազգային ազատական կուսակցությունը:

ե. Հայկական ազգային կոմիտեի կամ Հայ դատի հանձնախմբի նպատակն է Արևելյան և Արևմտյան Հայաստանի միավորումը և միասնական հայկական պետության կազմումը միայն Վիլսոնի նախանշած սահմաններում:

զ. Սևրի պայմանագիրը ստորագրած երկրները Լոնդոնի կոնֆերանսում փաստորեն հրաժարվեցին իրենց ստորագրություններից և վերանայեցին իրենց մոտեցումները Հայկական հարցի լուծման վերաբերյալ:

է. Խորհրդային իշխանության տարիներին Հայ դատի և պահանջատիրության խնդիրներով հիմնականում զբաղվում էր Սփյուռքը, որովհետև Խորհրդային Հայաստանը զրկված էր ինքնուրույն արտաքին քաղաքականություն վարելու հնարավորությունից:

1) գ, զ, է
2) ա, դ, ե
3) դ, ե, զ
4) բ, զ, է

55 **Ընտրե՛ք սխալ պնդումները։**

ա. Ք. ա. VII դարի վերջին Հայկական լեռնաշխարհի հարավ–արևմուտքում վերականգնված Հայկազունների իշխանությունը համապատասխանում է սեպագիր աղբյուրների Արմե–Շուբրիա պետական կազմավորմանը։

բ. Պոմպեոսի կողմից Պոնտոսը ռազմակալելուց հետո Միհրդատ Եվպատորը նահանջեց իր տերության հյուսիսային երկրամասերը, որտեղ էլ Ք. ա. 63 թ. ինքնասպան եղավ։

գ. Տիգրան III–ը իր գահակալման վերջին շրջանում ձերբազատվեց Հռոմի միջամտություններից և, մերձենալով Պարթևստանին, սկսեց վարել ինքնուրույն քաղաքականություն։

դ. Արտավազդ II–ը Կրասոսին առաջարկում էր պարթևների դեմ արշավել ոչ թե Հայաստանի հարավով, այլ Ասորիքի անապատներով, որպեսզի իր երկիրը զերծ պահի պարթևների հարձակումից։

ե. Հրահատ IV–ը փոխեց իր վերաբերմունքը Հայաստանի հանդեպ և զգալի ռազմական օգնություն տրամադրեց թագաժառանգ Արտաշեսին։

զ. Հայկազուն–Երվանդականների թագավորությունը երկրորդ համահայկական թագավորությունն է։

է. Համադաշնությունների համակարգը բնորոշ էր Հայկական լեռնաշխարհին՝ սկսած Ք. ա. IV հազարամյակից։

1) բ, դ, զ
2) ա, դ, է
3) բ, գ, ե
4) ա, զ, է

56 **Տրված փաստարկներից որո՞նք են ճիշտ։**

ա. Հայ–թաթարական ընդհարումները սկիզբ առան 1905 թ. փետրվարի 6–ին Երևանում, ապա շարունակվեցին Բաքվում, Գանձակում, Նախիջևանում և այլուր։

բ. Ռուսաստանում ապրող հայերի պատգամավորական Կենտրոնական ժողովը բացվեց 1906 թ. օգոստոսի 17–ին Էջմիածնում, որի նախագահ ընտրվեց Սիմոն Զավարյանը։

գ. Վարդանը Թիֆլիսում սպանեց հայ–թաթարական ընդհարումների կազմակերպիչ Նակաշիձեին։

դ. 1901 թ. նոյեմբերի 3–ին Անդրանիկը 37 հայդուկների և 20 զինված գյուղացիների հետ մտավ Մուշից հարավ–արևելք ընկած Ս. Առաքելոց վանք։

ե. 1903 թ. գարնանը Սասունի հայտնի Շենիկ գյուղում ստեղծվել է ինքնապաշտպանության զինվորական մարմին՝ Անդրանիկի գլխավորությամբ։

զ. 1917 թ. դեկտեմբերի 5–ին Երզնկայում ստորագրվել է զինադադարի համաձայնագիր Անդրկոմիսարիատի և Թուրքիայի միջև։

է. 1917 թ. մայիսի 2–11–ը Թիֆլիսում կայացել է արևմտահայերի առաջին համագումարը։

1) ա, դ, զ
2) բ, դ, զ
3) ա, գ, է
4) բ, ե, զ

57 **Հրամանատարների անունները համապատասխանեցրե՛ք զորամիավորումների անվանումներին և ընտրե՛ք պատասխանի ճիշտ տարբերակը։**

1. Ղարաքիլիսայի ճակատամարտում Առանձին հայկական կորպուսի առաջին դիվիզիա
2. Հայկական կորպուս
3. Հայկական առանձին հարվածային զորամաս
4. Սարդարապատի ջոկատ
5. Կովկասյան կորպուս
6. Առանձին հայկական կորպուսի Երևանյան զորախումբ

ա. Դանիել Բեկ–Փիրումյան
բ. Մովսես Սիլիկյան
գ. Անդրանիկ Օզանյան
դ. Արշակ Տեր-Ղուկասով
ե. Ալեքսանդր Բեյ–Մամիկոնյան
զ. Միխայիլ Լոռիս-Մելիքով
է. Թովմաս Նազարբեկյան

1) 1–դ, 2–զ, 3–ա, 4–բ, 5–ե, 6–գ
2) 1–ե, 2–բ, 3–դ, 4–ա, 5–է, 6–գ
3) 1–դ, 2–է, 3–գ, 4–ե, 5–զ, 6–բ
4) 1–ե, 2–է, 3–գ, 4–ա, 5–զ, 6–բ

58 **Թվարկվածներից որո՞նք են բնորոշ նէպին:**

1. բնամթերային հարկաձևի կիրառումից հրաժարումը և միասնական հարկի գանձումը դրամով
2. արդյունաբերական ձեռնարկություններին տնտեսական ինքնուրույնությունից զրկելը պետության կողմից
3. բերքի ավելցուկի ազատ տնօրինումը գյուղացիների կողմից
4. գների ազատականացումը
5. գյուղատնտեսական մթերքների բռնագրավումների ժամանակավոր դադարեցումը
6. հարկի չափի որոշվելը մինչև ցանքսը և տարվա ընթացքում այն երկու անգամ փոփոխելը
7. մանր ձեռնարկությունների ազգայնացումը
8. պարենհարկի փոխարինումը պարենմասնատրմամբ
9. շուկայական հարաբերությունների որոշ աշխուժացումը

59 **Տերմինների կամ հասկացությունների բացատրություններից որո՞նք են սխալ:**

1. Հայկական մարզի վերացումից հետո Շամքոր կենտրոնով Այսրկովկասում ստեղծված վարչական միավորը կոչվում էր Իմերեթական մարզ:
2. Ազատագրական պայքարի այն ձևը, երբ հայերը տարերայնորեն, անկազմակերպ դուրս են եկել կենաց ու մահու կռվի՝ իրենց ապրելու իրավունքն ու արժանապատվությունը պաշտպանելու համար, հայտնի է հայդուկային կամ ֆիդայական շարժում անունով:
3. Հայ իրականության մեջ առաջին հրապարակախոսական տպագիր աշխատությունը հայտնի է «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ» անունով:
4. Երևան, Նոր Բայազետ, Նախիջևան, Ալեքսանդրապոլ ու Օրդուբադ գավառներն ընդգրկող և 1846 թ. ստեղծված վարչական միավորը հայտնի է Երևանի նահանգ անունով:
5. Վերին Բասենի վարչական կենտրոն Հասան կալան ռուս մեծ գրող Ա. Պուշկինն անվանել է «Արզրումի (Էրզրում) բանալի»:
6. Թիֆլիսում 1917 թ. փետրվարին ստեղծված երկրամասի գործադիր իշխանության նոր մարմինը կոչվում էր Անդրկովկասյան հատուկ կոմիտե:
7. 1917 թ. նոյեմբերի 15-ին Անդրկովկասում կազմավորված գործադիր իշխանության մարմինը կոչվում էր Անդրկովկասյան կոմիսարիատ:
8. Պանթյուրքիզմը (համաթյուրքականություն) ենթադրում էր իսլամադավան բոլոր ազգերի միավորում օսմանյան Թուրքիայի դրոշի ներքո և քաղաքացիական պատերազմ (ջիհադ) բոլոր անհավատների՝ գյավուրների դեմ:

60 **Թվարկվածներից որո՞նք են ճիշտ արտահայտում հայկական միջնադարյան մշակութային կյանքի պատճառահետևանքային կապերը:**

1. Զարգացած միջնադարում հայկական տոմարագիտական մտքի նվաճումների արդյունքում հնարավոր դարձավ Դվինի երկրորդ եկեղեցական ժողովի կողմից Հայոց մեծ թվականի սահմանումը:
2. Կրթության և մշակույթի զարգացման գործում որոշակի դեր են խաղացել նաև կաթոլիկ քարոզիչների և նրանց հայ գործընկերների հիմնած հոգևոր-մշակութային կենտրոնները, որոնցից էին Ծործորի և Քոնայի դպրոցները:
3. Հովհան Որոտնեցու և Գրիգոր Տաթևացու ղեկավար գործունեության արդյունքում XIV դարի երկրորդ կեսին և XV դարի սկզբին բեղմնավոր գործունեություն ծավալեց Տաթևի համալսարանը:
4. Անանիա Շիրակացու տոմարագիտական հաշվումների արդյունքում վաղ միջնադարում ներդրվեց «Անշարժ տոմար»:
5. Մեսրոպ Մաշտոցի առաքելության արդյունքում հայկական դպրոցներ բացվեցին նաև Հայաստանի՝ Բյուզանդիայի գերիշխանության ներքո գտնվող արևմտյան մասում:
6. Ուշ միջնադարում Հայաստանի տնտեսական ու քաղաքական կացության հետևանքները առանձնապես ծանր եղան մանրանկարչության համար, երբ փակվեցին հայտնի մանրանկարչական մի շարք դպրոցներ:
7. Խաչատուր Կեսարացու ջանքերով Եվրոպայից բերված տպագրական գործիքներով հայկական տպարան էր հիմնվել Նոր Ջուղայում:

61 **Տրված պատմական իրադարձությունների պատճառներից կամ հետևանքներից որո՞նք են սխալ:**

1. Տիգրանակերտի գրավման պատճառն այն էր, որ քաղաքը պաշտպանող օտարազգի վարձկանները, կաշառվելով Պոմպեոսի կողմից, հռոմեացիների առջև դավաճանաբար բացեցին դարպասները:
2. Փոքր Ասիայում բռնկված պատերազմի ավարտից հետո Արտաշես I–ը, չեզոքություն պահպանելով, կարողացավ հաշտության պայմանագրում հատուկ կետ մտցնել, որի շնորհիվ Պոնտոսի հաշվին ընդարձակվեց Փոքր Հայքի տարածքը:
3. Հայ–մարական համագործակցության արդյունքում կործանվեց Աքեմենյան տերությունը:
4. Տրդատ I–ի թագավորության վեցերորդ տարում Մեծ Հայքի խաղաղ կյանքն ընդհատվեց սարմատների ներխուժման հետևանքով:
5. Երվանդ II–ի՝ Ք. ա. 360–ական թթ. գլխավորած հակապարսկական ապստամբությունն ավարտվել է պարտությամբ, որից հետո նա ապաստանել է Հունաստանում:
6. Սելևկյան պետության դիրքերը թուլացնելու նպատակով Արտաշես I–ը աջակցեց Մարաստանի սատրապ Տիմարքոսի ապստամբությանը:
7. Վանի թագավորության և կիմերների միջև Ք. ա. 735 թ. սկսված պատերազմն ավարտվեց քոչվորների պարտությամբ:
8. Ք. ա. 92 թ. սկսված հռոմեա–պարթևական բանակցությունների արդյունքում Հայաստանի դեմ ուղղված պայմանագիր կնքվեց:

62 **Տրված փաստարկներից որո՞նք են ճիշտ։**

1. Երիտթուրքերի կառավարությունը 1915 թ. ապրիլի 5–ի հատուկ օրենքով արգելել է տերության քաղաքացիների մուտքն ու ելքը կայսրությունից։
2. 1796–1799 թթ. Մադրասում Հարություն Շմավոնյանի նախաձեռնությամբ և հենց իր տպարանում լույս ընծայվեց հայկական առաջին պարբերականը՝ «Ազդարարը»։
3. Ռուսաստանյան առաջին հեղափոխությունն սկսվեց 1906 թ. հունվարի 9–ին՝ կայսրության մայրաքաղաք Մոսկվայում բանվորների խաղաղ ցույցի գնդակոծությամբ։
4. 1918 թ. ապրիլի 9(22)–ին հայտարարվել է Խորհրդային Ռուսաստանից Անդրկովկասի անջատվելու և այն անկախ հռչակելու մասին։
5. 1862 թ. Աշիր փաշայի կազմակերպած գրոհը Զեյթունի վրա ավարտվեց նրանով, որ թուրքերը, կորցնելով ավելի քան 20 000 մարդ և իրենց ունեցած հրանոթները, փախուստի դիմեցին։
6. 1877–1878 թթ. պատերազմի օրերին կրկին ապստամբած զեյթունցիների պայքարի արդյունքում Մարաշի փաշան ստիպված էր Պապիկ իշխանին ճանաչել Զեյթունի քաղաքագլուխ։
7. 1894 թ. Թիֆլիսում տեղի ունեցավ ՀՅԴ առաջին ընդհանուր ժողովը՝ համագումարը։
8. 1895 թ. սեպտեմբերի 18–ին Կ. Պոլսում հնչակյանները կազմակերպել են 4–հազարանոց խաղաղ ցույց։
9. Բեռլինի վեհաժողովի որոշումներից խիստ հիասթափվելով՝ Մկրտիչ Խրիմյանը և Խորեն Նարբեյը 1878 հուլիսի վերջին բողոք ներկայացրին մեծ տերություններին։

63 **Տրված պնդումներից որո՞նք են սխալ։**

1. ԽՍՀՄ հերոսներ Հունան Ավետիսյանը և Սուրեն Առաքելյանը կռվել են 89-րդ Թամանյան դիվիզիայի կազմում։
2. Լորիս Ճգնավորյանը 1991 թ. հիմնել է Գյումրիի մշակութային կենտրոնը։
3. ՀՅԴ ինքնավերացման համագումարից անմիջապես հետո Խորհրդային Հայաստանում վերացվեցին դաշնակցության ընդհատակյա կառույցները։
4. 1987 թ. հունիսի 18–ին ՄԱԿ–ը դատապարտել է հայերի ցեղասպանությունը և կոչ արել Թուրքիայի կառավարությանը՝ ճանաչելու ցեղասպանության փաստը։
5. Մեծ եղեռնի հիսնամյա տարելիցի օրը Երևանում տեղի ունեցան զանգվածային ցույցեր և հանրահավաքներ. Հայաստանում նման ելույթներ եղան նաև 1980–ական թվականների վերջերին։
6. Անդրկովկասի Դաշնությունը ԽՍՀՄ կազմում գոյատևել է մինչև 1939 թվականը։
7. 1950–ական թթ. հայկական արվեստի վերելքը պայմանավորված էր նաև 1945 թ. Երևանի գեղարվեստական ինստիտուտի հիմնադրումով։
8. 1938 թ., միջազգային դրության սրվելու հետ կապված, խորհրդային իշխանությունները փոքր–ինչ մեղմացրին բռնությունների քաղաքականությունը։

64 **Տրված պայմաններից որո՞նք են տեղ գտել Դամասկոսում կնքված հայ–արաբական դաշնագրում:**

1. Հայերից գանձվող հարկի հաշվին հայերը պահելու էին 15–հազարանոց այրուձին, որը պետք է պատրաստ լիներ գործելու նաև այլ տեղերում:
2. Պարսիկների ներխուժման դեպքում խալիֆայությունն այնքան զորք էր ուղարկելու, որքան պահանջեին հայերը:
3. Արաբական խալիֆայությունն առնվազն երեք տարի Հայաստանից հարկ չէր գանձելու, իսկ դրանից հետո վճարվող խորհրդանշական հարկի քանակը որոշելու էին արաբները:
4. Հայաստանի սահմանային խոշոր ամրոցներում արաբները տեղակայելու էին լավ մարզված և զինված կայազորներ:
5. Արաբական խալիֆայությունն առնվազն երեք տարի Հայաստանից հարկ չէր գանձելու, իսկ դրանից հետո վճարվող հարկի քանակը որոշելու էին հայերը:
6. Գանձվող հարկի հաշվին հայերը պահելու էին 15–հազարանոց այրուձի, որը արաբների պահանջով պետք է պատրաստ լիներ գործելու նաև այլ տեղերում՝ բացառությամբ Բյուզանդական կայսրության դեմ արաբների մղած կռիվների:
7. Բյուզանդացիների ներխուժման դեպքում խալիֆայությունն այնքան զորք էր ուղարկելու, որքան կամենային հայերը:

65 **Գտե՛ք այն երկու իրադարձությունները, որոնք խախտում են տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը:**

1. Հռադամիզդի փախուստը կնոջ հետ Արտաշատից
2. Ներոն կայսրի գահակալման սկիզբը
3. հռոմեա-պարթևական տասնամյա պատերազմի սկիզբը
4. Արտաշատի ավերումը Կորբուլոնի կողմից
5. Լեգարդա ամրոցի գրավումը Կորբուլոնի կողմից
6. փոքրաթիվ զորաջոկատով Տրդատի հեռանալը Ատրպատական եղբոր՝ Բակուրի մոտ
7. Պետոսի զորքի պարտությունը Հռանդեայում և ծաղրուծանակի ենթարկվելը
8. Ներոն կայսեր կողմից իր պայմանի հայտնելը Վաղարշ I-ին՝ Տրդատի Հռոմ մեկնելու և թագն իրենից ստանալու մասին
9. Մծբինում հռոմեա-պարթևական զինադադարի կնքումը և Կորբուլոնի զորամասի դուրս գալը Տիգրանակերտից

66 **Իրադարձությունները դասավորե՛ք ժամանակագրական հաջորդականությամբ։**

1. ՀՀ դառնալը ՄԱԿ–ի լիիրավ անդամ
2. ՀՀ դառնալը ԵԱՏՄ-ի լիիրավ անդամ
3. «ՀՀ պաշտպանության նախարարության մասին» որոշման ընդունումը
4. ՀՀ լիիրավ անդամակցությունը Եվրոպայի խորհրդին
5. ԱՊՀ ստեղծումը
6. ՀՀ–ում բազմակուսակցական համակարգ ստեղծելու մասին օրենքի ընդունումը
7. Հրանտ Դինքի սպանությունը

67 **Իրադարձությունները դասավորե՛ք ժամանակագրական հաջորդականությամբ։**

1. Արուճ ավանում Ս. Գրիգոր եկեղեցու և իշխանական պալատի կառուցումը
2. Վրաց եկեղեցու անջատվելը Հայ եկեղեցուց
3. Քաղիսիայի ճակատամարտը
4. Համազասպ Մամիկոնյանի ճանաչվելը հայոց իշխան
5. Մրենի եկեղեցու կառուցումը
6. Վարազտիրոցի փախուստը գերությունից և վերադարձը հայրենիք
7. Կոմիտաս Մամիկոնյանի օծվելը հայոց կաթողիկոս

68 **Կատարե՛ք համապատասխանեցում։**

Ա. Հենրիխ Պողոսյան
Բ. Վազգեն Մանուկյան
Գ. Սարգիս Լուկաշին
Դ. Խաչիկ Մուղդուսի
Ե. Արթուր Մկրտչյան
Զ. Սուրեն Թովմասյան
Է. Լևոն Տեր-Պետրոսյան

1. ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահ
2. ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար
3. Կոմկուսի ԼՂԻՄ մարզկոմի առաջին քարտուղար
4. ՀՍԽՀ Ժողովրդական տնտեսության խորհրդի նախագահ
5. Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահ
6. ՀԿ(բ)Կ կենտկոմի առաջին քարտուղար
7. Ազգային ժողովրդավարական միության նախագահ
8. Խորհրդային Հայաստանի ներքին գործերի ժողկոմ

Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է

69 **Ապստամբության կամ խռովության տարեթվերը համապատասխանեցրե՛ք դրանցում գլխավորող կամ ղեկավար դեր ունեցած մարդկանց անուններին։**

Ա. Գրիգոր Մամիկոնյան
Բ. Հովնան Խութեցի
Գ. Արտավան Արշակունի
Դ. Վասպուրականի Սմբատ իշխան
Ե. Վարդան Մամիկոնյան
Զ. Արշակ Արշակունի
Է. Մուշեղ Մամիկոնյան

1. 571–572 թթ.
2. 748–750 թթ.
3. 539 թ.
4. 850–855 թթ.
5. 703 թ.
6. 548 թ.
7. 774–775 թթ.
8. 538 թ.

Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է

70 **Տրված վեց պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրե՛ք «Ճիշտ է», «Սխալ է», «Չգիտեմ» պատասխաններից որևէ մեկը։**

1. Հայաստանի անկախության մասին հռչակագրի տնտեսական բաժնում նշվում էր, որ Հայաստանի տարածքում հողը, ընդերքը, ձեռնարկությունները համարվում են բացառապես հայ ժողովրդի սեփականությունը։
2. ՀԽՍՀ–ն վերանվանվել է Հայաստանի Հանրապետություն անկախության մասին հանրաքվեի արդյունքում։
3. Խորհրդային Հայաստանի Գիտության և արվեստի ինստիտուտի մեջ մտնում էին երեք տարով ընտրված իսկական և թղթակից անդամներ, իսկ ինստիտուտի բարձրագույն մարմինը նրա անդամներից կազմված խորհուրդն էր։
4. Հայաստանի անկախության մասին հռչակագրով ընդունվում էր ՀՀ օրենքների գերակայությունը ԽՍՀՄ օրենքների նկատմամբ. եթե ԽՍՀՄ օրենքը հաստատվում էր ՀՀ Ազգային ժողովի կողմից, ապա այն գործելու էր հանրապետությունում։
5. ՀՀ սահմանադրական առաջին փոփոխություններով տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների ժամկետը դարձավ չորս տարի։
6. Խորհրդային Հայաստանում 1967 թ. գործում էր 112 գիտահետազոտական հիմնարկ, որոնցում ընդգրկված էին 20 հազարից ավելի գիտական աշխատողներ։